

# Armenian Church Of Our Saviour

Ս. ՓՐԿԻԶ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ, ՌԻՍՏՐԻ



Փետրուար 8, 1978

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք

Սիրելի Սրբազան Հայր,

Այսու կուգանք յայտնել Ձերդ Սրբազնութեան թէ եկեղեցւոյս տարեկան ծխական ժողովը գումարուեցաւ Յունուար 25, 1978 Ձորեքշաբթի երեկոյեան 39 անդամներու ներկայութեամբ: Եկեղեցւոյս տրատու անդամներու թիւն է 500: Կիրակի, Յունուար 29ին, տեղի ունեցաւ քուէարկութիւնը 168 տրատու անդամներու մասնակցութեամբ իբրեւ շարունակութիւն Յունուար 25ի ժողովին:

6

Օրինաւոր կերպով կատարուեցաւ ընտրութիւնը Միական Խորհուրդին, Հաշուեքննիչ Յանձնախումբին եւ Ընտրողական Յանձնախումբին: Միական Խորհուրդի նորընտիր անդամներն են Տիարք՝ Ճան Մէրզիկեան, Զարգ Կարապետեան, Վահան Բողարեան, Ճան Ներսէս Խապան, Լէօ Բարնակեան եւ Երուանդ Օսկանեան:

Ներքակ կը գտնէք եկեղեցւոյս տարեկան տեղեկագիրներու գրքոյքը, ինչպէս նաեւ Միական ժողովի ընտրութեանց արդիւնքը, ընտրութեանց քուէաթուղթէն օրինակ մը թեկնածուներուն անուններով եւ ստացած քուէներով, թեմական պատգամաւորներուն անուններն ու հասցէները, եկեղեցական կազմակերպութեանց վարչական մարմիններու ատենապետներու անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, Առաջնորդարանէն ղրկուած տպագրեալ տեղեկագիրները, ծխական ժողովի ատենագրութիւնը, ծխական ժողովի ներկայացուած ելեւմտական հաշուեկշիռը եւ անդամներուն ղրկուած հրաւիրագրէն օրինակ մը:

Յանձնելով վերոյիշեալ տեղեկութիւնները Ձեր բարձր նկատողութեան կը խնդրենք Միական Խորհուրդի նորընտիր անդամներու ընտրութեան վաւերացումը:

Մաղթելով Ձերդ Սրբազնութեան թեմական գործերուն կատարեալ յաջողութիւն ի Տեառնէ,

Մնամք խոնարհաբար աղօթակից  
Եղիշ Կրկ. Կիլիկեան  
Եղիշէ Ս. Վրդ. Կիլիկեան, հովիւ եւ  
նախագահ Միական ժողովի

